ւի տակ սահող խլեղների բնակավայր ու պարապ հորի մինակութիւն:

Ճարտարապետը փորձում է ինչ որ բացատրութիւն տալ, բայց սկսած նախադասութիւնը կիսատ է մնում: Խօսքերը գլորւում են վիհի մէջ, ուր ամէնքս կուչ ենք եկել: Ընկել ենք ճահճուտների մէջ, գորշ-դեղին քարէ մեռեալ մի դաշտ, ուր մինակութիւնը իր սմբակն է կոտրում եւ մեր յոյզերը բուրդ-բուրդ դարսում:

Ինձ թւում է այնպէս, որ մենք ճամբորդում ենք անդրերկրային մի աշխարհի մէջ:

Սեւանայ երկիրը անհունից հիւսուած խոր մի յիշատակ է: Մեքենաբար կրկնում ենք ամէնօրեայ մեր ժեստերը, աշխատում ենք լինել այն՝ ինչ որ ենք, բայց չենք:

Նաւարկում ենք երազային մի նաւի վրայ՝ անմարմին, գրեթէ օդային:

Նայում ենք մէկ մէկի, հեռաւոր աչքերով:

Ղուղի:

Կոնեակ:

Այրի վանք:

Աւիի ճաղատ գլխի վրայ՝ գմբէթ: Ու սառը այս օդի մէջ գալիս է — այնտեղից, ուր երբեմն ապրած ենք — ռունդները չորացնող, չունչը կորոշ տօթը ու տապակում, խանձում սրտերը եւ աղիքները:

Նաւը սուլում է: Ամէնքը դարձնում են իրենց գլուխը:

Նաւը սուլում է լիճին: Լիճը չի պատասխանում:

Ոչ ոք չի պատասխանում:

Լսում ենք՝ ոչ մի ձայն:

Նայում ենք՝ ապակեացած աչքերով:

Տարակոյս չկայ, անցել ենք մահուան սահմանը, նաւարկում ենք դէպի անյայտը:

Ուրեմն դա՞ է: Վերջապէս, դա՞ է անտեսանելին:

Անշուշտ մէկը զուարճանում է մեզ հետ: Շինել է մեքենական այս խաղալիքը եւ բաց է թողել անծայրի երեսին:

Փոքրիկ բանալին դարձրել է մղանակը, ժամացոյցի նման ճշգրիտ մեքենայի մղանակը, եւ զուարճանում է:

Թրփ-թրփ-թրփ՝ նաւը գնում է:

— Մի բաժակ կոնեակ՝ հրամեցէ՛ք:

— Շնորհակալութիւն:

— Շնորհակալութիւն:

— Շնորհակալութիւն:

Ձեռքերը ստոլճանարար երկարում են, շրթունքները կամաց բացւում եւ կաւէ չինուած մատների մէջ բաժակը ետ է վերադառնում:

— Այրի վա՛նքը: Տեսէ՛ք:

Այրի վա՞նքը:

Այրի վա՞նքը:

Այրի վա՞նքը:

Բոլոր գլուխները երկաթէ մկանունքների մղումով դառնում են դէպի ձախ եւ կոպերի տակ ընտեղած ապակիէ աչքերը շարժւում են:

Պետական թերթի հաստագլուխ խմբագիրը ծիծաղում է.—

— Հի՛, հի՛, հի՛...

Բիբերի մէջ արեւի ճառագայթ է ընկնում, աչքերը ծածկում է:

— Հի՛, հի՛, հի՛:

— Այրի վանքը, ասում է մէկը, էլ մոռացել եմ ո՞ր դարում, եղել է մեծ մի տոհմի փառահեղ կենտրոնը:

— Մենք ծնուել էինք շատ յետոյ, պատասխանում է մի ուրիշը, բայց ես յիշում եմ Գեղարդը եւ ժայռերի մէջ փորուած եկեղեցիները...

— Զաքարիա իշխանը եւ իր եղբայր Իվանէն:

— Շահանշահը եւ Աւագը:

— Գեղեցիկ անուններ:

— Այո՛:

— Այո՛:

— Այո՛:

Լիճը հրում է բոլոր հորիզոնները, եւ թւում է ինձ, որ անյայտը կամաց կամաց մեզ կլանում է:

Այնտեղ վարը երկրագունդը շարունակում է սպրել: Մեծ քաղաքներում մարդիկ խենթացած վազում են, մէկը միւսին հրմշտկում, շտապում, կուում: Ո՞ւր են շտապում...

Թրփ-թրփ-թրփ, մեր նաւը գնում է:

Այրի վանքի վրայ արշաւող մոնղոլների ահաւոր վոհմակները լռել են: Շահանշահի սուրը արիւնած է, իսկ իր ձին վազում է քառասմբակ եւ ահաւոր վրնջոցներ արձակում:

Հայ մատենագրության թուանշանային գրադարան